

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի ընդունման

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը մշակվել է ելնելով Երևանի քաղաքապետարանի
առանձնահատկություններով պայմանավորված՝ աշխատակազմին ներկայացվող պահանջներից,
ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 181-րդ հոդվածից:

ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի
համաձայն աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի
կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների
նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը: Օրենքի նշված դրույթի
հետ կապված խնդիրներն ի հայտ են եկել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով
«քաղաքապետարանի աշխատակազմ» հասկացության ներմուծմամբ, որն իր մեջ ընդգրկում է
ինչպես Երևանի, այնպես էլ ՀՀ մյուս քաղաքապետարանների աշխատակազմերը: Այս առումով՝
գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն «Տեղական ինքնակառավարման մասին»
ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման
մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի միջև:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն ՏԻՄ-երի ծառայողների
աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Այս առումով՝
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նոր խմբագրությամբ
շարադրելու կարիք ունի:

ՏՎՅԱԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը տվյալ բնագավառում իրականացվող
քաղաքականության փոփոխություն չի նախատեսում:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԲՆՈՒՅԹԸ

Ներկայացված օրենքի նախագծի նպատակը՝

1. Երևանի քաղաքապետարանի մասով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ
օրենքով աշխատակազմերին ներկայացվող իմպերատիվ պահանջի, ինչպես նաև «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի և «Երևան քաղաքում
տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի միջև առկա
անհամապատասխանությունների վերացումն է,

2. աշխատակազմի աշխատակիցների, այդ թվում՝ համայնքային ծառայողների,
աշխատանքի վարձատրության կարգի և պայմանների վերաբերյալ ընդհանուր դրույթների
սահմանումն է:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի
համայնքային ծառայության հարցերի վարչության կողմից:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից «վարչություն» և (կամ) «բաժին» տեսակի ստորաբաժանումներով կառուցվածքի ձևավորման հնարավորությունն է, ինչպես նաև բոլոր համայնքների համար աշխատանքի վարձատրության ընդհանուր կարգի և պայմանների, իսկ յուրաքանչյուր առանձին համայնքի դեպքում՝ նաև աշխատանքի վարձատրության չափի հաշվարկման միատեսակ կարգի ներմուծումն է: